



ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
2020Թ. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ	2
ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	5
ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	16
ԱՄՓՈՓՈՒՄ	17

ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից 2020թ. բյուջեի վերաբերյալ կազմված փաթեթի՝ Երևան համայնքի բյուջեն ուղղված է լինելու քաղաքային տնտեսության մի շարք ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացմանը: Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի այն միջոցառումները, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Ըստ քաղաքապետարանի՝ ծրագրերի մշակման և իրականացման ուղենիշ են լինելու թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը, ինչպես նաև հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը, քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը և այլն:

Համաձայն բյուջեի վերաբերյալ ներկայացված փաթեթի՝ Երևանի 2020 թվականի զարգացման գերակայությունների շարքին է դասվում այնպիսի խնդիր, ինչպիսին է մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավումը: Հայտնի է, որ 2019-ին ստեղծվել է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» ՀՈԱԿ-ը, ինչը նշանակում է, որ արդեն մասնավոր ընկերության փոխարեն աղբահանությունն ու սանիտարական մաքրումը պետք է կազմակերպվի Երևանի քաղաքապետարանի կողմից: Սակայն, ըստ ներկայացված բյուջեի՝ աղբահանմանն ուղղված ծախսերը կաճեն մոտ 90.5%-ով՝ կազմելով 16.0 մլրդ դրամ, նախորդ տարվա 8.4 մլրդ դրամի փոխարեն: 2020-ի գերակայությունների շարքին է դասվում նաև Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման մեկնարկի ապահովումը: Ըստ քաղաքապետարանի՝ բյուջեի կարևորագույն խնդիրներից է Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանումը և ավելացումը, ինչը կիրականացվի նորաստեղծ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի կողմից՝ նախկին վարչական շրջաններում կանաչապատում իրականացնող ՓԲԸ-ների փոխարեն:

Հատկանշական է, որ 2019-ին պլանավորված ծրագրերն ըստ առաջնահերթությունների և գերակայությունների 2020-ին հիմնականում նույնն


են մնացել: 2020թ. նախորդ տարվա համեմատ ավելացել է ընդամենը երկու ծրագիր՝ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ու բնակիչների միջև համագործակցության կապի ամրապնդման և սոցիալական բնակարանաշինության նոր ծրագրերը: Ծրագրային փոփոխությունների այսպիսի չնչին տարբերությունը հուշում է, որ 2019-ին սահմանված զարգացման ծրագրերը անկատար են մնացել:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 107.1 մլրդ դրամի չափով: Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված եկամուտները կազմել են 83.1 մլրդ դրամ: 2020թ. 2019-ի համեմատ եկամուտները ավելի են 24.0 մլրդ դրամով կամ 28.9%-ով, սակայն ծրագրված եկամուտները գերազանցում են 2018 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտները 38.5 մլրդ դրամով կամ 56.1%-ով: 2018-ին Երևանի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 68.6 մլրդ դրամ, 2018թ. ճշտված բյուջեի նկատմամբ կատարողականը կազմել է 83.5%: 2020թ. բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 27.0 մլրդ դրամ, որը 2019 թվականի նախատեսվածից ավելի է 3.0 մլրդ դրամով, իսկ 2018 թվականի սեփական եկամուտների փաստացի կատարողականից՝ 5.6 մլրդ դրամով:

Հարկերն ու տուրքերը 2020թ. կկազմեն 18.4 մլրդ դրամ (կամ ընդհանուր եկամուտների 17.2%-ը), որը 2019թ. հաստատված ցուցանիշից ավելի է 17%-ով: Առանձին վերցված հարկային եկամուտները 2020-ին ծրագրվել են 14.8 մլրդ դրամի չափով՝ 2019 թվականի համար հաստատված ցուցանիշից շուրջ 2.1 մլրդ դրամով կամ 16.5%-ով ավելի: 2020թ. Երևան քաղաքի բյուջեով նախատեսված հարկային եկամուտների 14.1 մլրդ դրամը կստացվի գույքահարկից (ըստ 2019-ի հաստատված ցուցանիշի՝ գույքահարկը կազմելու է 12 մլրդ դրամ), իսկ 0.7 մլրդ դրամի ստացումը ծրագրվել է հողի հարկից (ըստ 2019-ի հաստատված ցուցանիշի՝ հողի հարկը կազմելու է 0.7 մլրդ դրամ): Գույքահարկի գծով եկամուտների աճի գերակշիռ մասը՝ 1.9 մլրդ դրամը, նախատեսված է ապահովել փոխադրամիջոցների գույքահարկից: Նման աճը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2019թ. ընթացքում մեքենաների ներկրման աննախադեպ աճը: Սակայն այստեղ հաշվի չի առնվել մի կարևոր հանգամանք՝ 2019թ. ներկրված մեքենաների մեծ մասը, դուրս են բերվել ՀՀ-ից ԵԱՏՄ երկրներ, այսինքն՝ այդ մեքենաների համար գույքահարկի ստացումը կարելի է համարել անիրատեսական:

Գծապատկեր 1. Երևանի 2020թ. բյուջեի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների, մլրդ դրամ



Տեղական տուրքերի գծով 2020 թվականին ծրագրվել են 3.2 մլրդ դրամի մուտքեր՝ 2019-ին նախատեսված շուրջ 2.7 մլրդ դրամի դիմաց (ավելացումը 2019-ի համեմատ կկազմի 0.46 մլրդ դրամ կամ 17.1%): Տեղական տուրքերի ավելացումը կապված է տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2020 թվականի բյուջեով կանխատեսված մուտքերի ավելացման հետ (2020-ին՝ 1.4 մլրդ դրամ), որն ավելի է 2019թ. նախատեսված ցուցանիշից 0.1 մլրդ դրամով կամ 7.7%-ով:

2020 թվականի բյուջեով ծրագրվել են 24.0 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որոնք կազմում են 2020-ի ընդհանուր եկամուտների 22.4%-ը: 2019-ի հաստատված բյուջեով պաշտոնական դրամաշնորհները կազմում են 23.9 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 28.8%-ը: 2018թ. ճշտված ցուցանիշի համեմատ, որը կազմում է 22.3 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 32.5%-ը, 2020-ի ավելացումը կկազմի 1.7 մլրդ դրամ կամ 7.6%-ը: Երևան քաղաքի բյուջե մուտքագրվող՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար միջազգային կազմակերպություններից ստացված արտաքին պաշտոնական դրամաշնորհները 2020-ին նախատեսվել են 1.6 մլրդ դրամ, որը 2019թ. հաստատված ցուցանիշից (շուրջ 1.4 մլրդ դրամ) ավելի է 0.2 մլրդ դրամով կամ 11.8%-ով: Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, 2020-ին կկազմեն 21.9 մլրդ դրամ՝ 2019-ի նախատեսված ցուցանիշի չափով: Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներից 2020թ. ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախատեսվել են 13.4 մլրդ դրամ՝ 2019 թվականի ճշտված և 2018 թվականի փաստացի ստացված ցուցանիշների չափով: Նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով 2020-ին նախատեսվել է 8.4

մլրդ դրամից փոքր ինչ ավելի՝ 2019թ. համար նախատեսված ցուցանիշի չափով: Կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով 2020-ին նախատեսվել է 0.6 մլրդ դրամ՝ 2019թ. համար նախատեսված ցուցանիշի չափով:

Այլ եկամուտները 2020 թվականի նախագծով ծրագրվել են 64.7 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր եկամուտների 60.4%-ը: 2019 թվականի հաստատված բյուջեով այլ եկամուտները նախատեսվել են 43.5 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր եկամուտների 52.3%-ը: 2020թ. 2019-ի համեմատ ավելացումը կկազմի 21.2 մլրդ դրամ կամ 48.8%: Այլ եկամուտների մեջ գերակշիռ մաս կազմող՝ պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից ստացվող միջոցները 2020 թվականի համար ծրագրվել են 56.1 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 52.4%-ը: 2019-ին պատվիրակված լիազորությունների համար նախատեսվել է 35.3 մլրդ դրամ (ընդհանուր եկամուտների 42.5%-ը): Ըստ 2018 թվականի փաստացի ցուցանիշի՝ պատվիրակված լիազորությունների համար տրամադրվել է 25.0 մլրդ դրամ (ընդհանուր եկամուտների 36.4%-ը): Ավելացումը 2020թ. 2019-ի և 2018-ի համեմատ համապատասխանաբար կազմել է 20.8 մլրդ դրամ կամ 58.9% և 31.1 մլրդ դրամ կամ 124.4%: Ստացվում է, որ եթե Երևանի բյուջեի եկամուտներից դուրս բերենք պետական բյուջեից հատկացվող միջոցները պատվիրակված լիազորությունների համար, ապա 2020թ. եկամուտները կկազմեն՝ 51 մլրդ դրամ, 2019-ին՝ 47.8 մլրդ դրամ, իսկ 2018-ին՝ 43.6 մլրդ դրամ: Այսպիսով, 2019-ին 2018-ի համեմատ Երևանի բյուջետային եկամուտները, առանց պատվիրակված լիազորությունների համար տրամադրվելիք գումարների ավելացել են 4.2 մլրդ դրամով կամ 9.6%-ով, իսկ 2020-ին 2019-ի համեմատ ավելացել են 3.2 մլրդ դրամով կամ 6.7%-ով:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Երևանի 2020թ. բյուջեի «աննախադեպությունը» ուղղակիորեն կապված է պետական բյուջեից ստացվող միջոցների հետ: Այդ միջոցները հիմնականում կուղղվեն պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև Երևանի կոշտ թափոնների կառավարման, Երևանի քաղաքային լուսավորության քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետարանին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորմանը:


Բյուջեի այլ եկամուտների մեջ բաժին ունեն նաև տեղական վճարները: Տեղական վճարների գծով 2020-ին ծրագրվել է 5.8 մլրդ դրամ, որը 2019թ. հաստատված ցուցանիշից ավելի է 0.1 մլրդ դրամով կամ 1.7%-ով: 2018-ին տեղական վճարների փաստացի հավաքագրման ցուցանիշը կազմել է՝ 4.8 մլրդ դրամ, որը 2020-ի համեմատ ցածր է 1 մլրդ դրամով կամ 20.8%-ով:

Այսպիսով, 2020թ. Երևանի բյուջեի եկամուտների ավելացումը հիմնականում կապված է մեքենաների գույքահարկի ավելացման հետ (ինչը դժվար է իրատեսական համարել՝ հաշվի առնելով ՀՀ-ից մեքենաների դուրսբերումը) և 2020-ին ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների հետ (56.1 մլրդ դրամ), որոնք կուղղվեն կառավարության կողմից պատվիրակված լիազորություններին (դրանց թվին կարող են դասվել, օրինակ՝ ուսուցիչների և բուժաշխատողների աշխատավարձերի բարձրացումը):

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով ծախսերի ծավալը ծրագրվել է շուրջ 116.3 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 90.3%-ը կամ 105.0 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, ոչ ֆինանսական ակտիվների գծով *զուտ* ծախսերը կկազմեն 11.3 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 9.7%-ը: Համեմատության համար պետք է նշել, որ 2019-ին ընդհանուր ծախսերի ամբողջ ծավալի 93.1%-ը կամ 78.5 մլրդ դրամը կազմում են ընթացիկ ծախսերը, ոչ ֆինանսական ակտիվների գծով *զուտ* ծախսերը կազմում են 5.8 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 6.9%-ը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 9.2 մլրդ դրամ, ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը՝ -3.4 մլրդ դրամ): Այսինքն՝ 2020թ. ոչ ֆինանսական ակտիվների գծով *զուտ* ծախսերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերի մեջ կավելանա 2019-ի նույն ցուցանիշի համեմատ 1.9 տոկոսային կետով, իսկ ընթացիկ ծախսերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերի մեջ 2020-ին 2019-ի համեմատ կնվազի 1.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Երևանի 2018-2020թթ. բյուջեների ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ




2020թ. բյուջեի ծախսային մասը 2019 թվականի հաստատված բյուջեով նախատեսված (84.3 մլրդ դրամ) ծախսային մասից ավելի է 32.0 մլրդ դրամով կամ 38.0%-ով: Այդ գումարից 20.8 մլրդ դրամը << 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշի ավելացումն է, 7.9 մլրդ դրամը տարեսկզբի ազատ մնացորդն է, 3.1 մլրդ դրամը եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտների ավելացումն է, իսկ 0.2 մլրդ դրամը ձևավորվել է այլ արտաքին աղբյուրներից ստացված դրամաշնորհներից: 2018թ. Երևանի բյուջեի համար նախատեսված ծախսերի փաստացի կատարողականը բյուջեի ծախսերի տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 73.4%, տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 78.3%, ինչի արդյունքում 2018-ին փաստացի ծախսվել է 62.8 մլրդ դրամ:

Եթե դիտարկենք Երևանի բյուջեն՝ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, 2020թ. բյուջեային ծախսերի ծավալներում տնտեսական ծառայությունների խմբին ուղղված ծախսերը կունենան ամենամեծ կշիռը՝ 54.5 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 46.9%: Սոցիալական ծառայությունների խմբին ուղղված ծախսերը կկազմեն՝ 41.0 մլրդ դրամ, որը կկազմի ընդհանուր ծախսերի 35.2%-ը:

Ընդհանուր նշանակության ծառայությունների խմբին ուղղված ծախսերը կկազմեն ընդհանուր ծախսերի 8.9%-ը՝ 10.3 մլրդ դրամով, իսկ հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդը կկազմի շուրջ 10.5 մլրդ դրամ՝ ընդհանուր ծախսերի 9.0%-ը:

**Գծապատկեր 3. 2018-2020թթ. Երևանի բյուջեի ծախսերը՝
ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, %**



**Աղյուսակ 1. 2018-2020թթ. Երևանի բյուջեի ծախսերը՝
ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, մլրդ դրամ**


	2018թ. փաստացի	2019թ. բյուջե	2020թ. հաստատված
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	62.8	84.3	116.3
Ընդհանուր նշանակության ծառայություններ	7.4	9.6	10.3
Տնտեսական ծառայություններ	18.0	32.6	54.5
Սոցիալական ծառայություններ	32.7	35.2	41.0

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ	4.7	6.9	10.5
---	-----	-----	------

2020թ. 2019-ի համեմատությամբ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի առկա է ծախսերի աճ բոլոր խոշորացված խմբերում: 2020-ին ընդհանուր նշանակության ծառայություններին ուղղված ծախսերը 2019թ. համեմատ կապելանան 0.7 մլրդ դրամով կամ 7.3%-ով, տնտեսական ծառայություններին ուղղված ծախսերը կապելանան 21.9 մլրդ դրամով կամ 67.2%-ով: 2020-ին նախորդ տարվա համեմատ սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերը կապելանան 5.8 մլրդ դրամով կամ 16.5%-ով, իսկ հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդը կապելանա 3.6 մլրդ դրամով կամ 52.2%-ով: Չնայած այն հանգամանքին, որ ծախսերը ըստ խոշորացված խմբերի աճել են, հատկանշական է այն փաստը, որ 2020թ. 2019-ի համեմատ որոշ խմբերի տեսակարար կշիռները ընդհանուր ծախսերի մեջ նվազել են: Այսպես, սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ 2020թ. նախորդ տարվա համեմատ կնվազի 6.5 տոկոսային կետով, իսկ ընդհանուր նշանակության ծախսերի տեսակարար կշիռը 2020թ. 2019-ի համեմատ կնվազի 2.5 տոկոսային կետով:


Ընդհանուր նշանակության ծառայությունների խմբի մեջ են մտնում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին և պաշտպանությանն ուղղված ծախսերը, որոնք 2020-ին համապատասխանաբար կկազմեն՝ 10.3 մլրդ դրամ և 0.04 մլրդ դրամ:

Գծապատկեր 4. Ընդհանուր նշանակության ծառայությունների գծով ծախսեր, մլրդ դրամ



Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված ծախսերը 2020-ին 2019-ի (9.6 մլրդ դրամ) համեմատ կավելանան 0.7 մլրդ դրամով կամ 7.3%-ով, իսկ պաշտպանությանն ուղղված ծախսերը փոփոխություններ չեն կրի: Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը 2020-ին ընդհանուր ծախսերի մեջ կկազմի 8.8%, իսկ 2019թ. այն կկազմի ընդհանուր ծախսերի 11.4%-ը: 2020թ. ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված ծախսերի մեծ մասը՝ 9.6 մլրդ դրամը կամ 94.1%-ը, բաժին է ընկնում օրենսդիր և գործադիր մարմիններին և պետական կառավարմանը, 2019թ. կազմում էր 9.1 մլրդ դրամ կամ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների 94.8%-ը:

Գծապատկեր 5. Տնտեսական ծառայությունների գծով ծախսեր, մլրդ դրամ



Տնտեսական ծառայություններին ուղղված ծախսերը 2020թ. կկազմեն 54.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 32.6 մլրդ դրամի փոխարեն: Տնտեսական ծառայությունների գծով բոլոր ճյուղերին ուղղված ծախսերը 2020-ին 2019թ. համեմատ կավելանան: Այսպես, 2020-ին շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերը նախորդ տարվա համեմատ կավելանան 10.0 մլրդ դրամով կամ 99.0%-ով և կկազմեն 20.1 մլրդ դրամ՝ 2019թ.-ի 10.1 մլրդ դրամի փոխարեն: Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերի ավելացումը կապված է հիմնականում Երևան քաղաքի աղբահանմանն ուղղված ծախսերի ավելացման հետ, որը 2020թ. կկազմի 16.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 8.4 մլրդ դրամի փոխարեն, այսինքն՝ ավելացումը կազմել է 90.5%: Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ 2020-ին կկազմի՝ 17.3%, 2019-ին՝ 12%:

2020թ. տրանսպորտի ճյուղին ուղղված ծախսերը կկազմեն 22.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 13.3 մլրդ դրամի փոխարեն, ավելացումը կկազմի 9.3 մլրդ դրամ կամ 69.9%: Տրանսպորտի ճյուղին ուղղված ծախսերի ավելացումը կապված է

ճանապարհային տրանսպորտին ուղղված ծախսերի (ծախսերը 2020-ին կկազմեն 11.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 4.2 մլրդ դրամով) և խողովակաշարային և այլ տրանսպորտային տեսակներին ուղղված ծախսերի ավելացման հետ (ծախսերը 2020-ին կկազմեն 10.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշից 5.1 մլրդ դրամով ավելի է): Տրանսպորտի ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ 2020-ին կկազմի 19.4%՝ 2019-ի 15.8%-ի փոխարեն:

Էներգետիկայի ճյուղին ուղղված ծախսերը 2020թ. կկազմեն 4.9 մլրդ դրամ, ինչի արդյունքում 2019թ. (4.1 մլրդ դրամ) համեմատ ավելացումը կկազմի 0.8 մլրդ դրամ կամ 19.5%: Սակայն, դիտարկելով 2018թ. համար էներգետիկայի ճյուղին ուղղված ծախսերի ճշտված պլանը (3.3 մլրդ դրամ) և փաստացի կատարողականը (0.014 մլրդ դրամ), հարց է առաջանում՝ այդ ճյուղին ուղղված ծախսերի փաստացի կատարողականի իրատեսական լինելու վերաբերյալ: Էներգետիկայի ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ 2020թ. կկազմի 4.2%, 2019թ.՝ 4.9%: չնայած այս ճյուղին ուղղված ծախսերի ավելացմանը, 2020-ին էներգետիկայի ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ կնվազի 0.7 տոկոսային կետով:

Բնակարանային շինարարությանն ուղղված ծախսերը 2020-ին կկազմեն 8.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 7 մլրդ դրամի փոխարեն, ավելացումը 2020-ին նախորդ տարվա համեմատ կկազմի 1.9 մլրդ դրամ կամ 27.1%: Բնակարանային շինարարությանն ուղղված ծախսերի մեջ ամենամեծ մասնաբաժինը ունի փողոցների լուսավորմանն ուղղված ծախսերը, 2020-ին այն կկազմի 4.9 մլրդ դրամ, 2019-ին՝ 3.6 մլրդ դրամ, ավելացումը 2020-ին նախորդ տարվա համեմատ կկազմի 1.3 մլրդ դրամ կամ 36.1%: Բնակարանային շինարարության ծախսերը կուղղվեն նաև բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգմանը (ծրագրերով նախատեսվել է 0.9 մլրդ դրամ), բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգմանը և պահպանմանը (1.5 մլրդ դրամ), բազմաբնակարան շենքերի մուտքի ամբողջական վերանորոգմանը (0.8 մլրդ դրամ): 2020թ. բնակարանային շինարարությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կկազմի 7.6%, 2019-ին այս ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կկազմի 8.3%, այսինքն՝ այս ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ 2020-ին նվազել է 2019-ի համեմատ 0.7 տոկոսային կետով:

Այլ բնագավառների դասին ուղղված ծախսերը (2020-ին և 2019-ին՝ 0.1 մլրդ դրամ) ամբողջովին կհատկացվեն զբոսաշրջության զարգացմանը, Երևանը


զբոսաշրջիկների համար ճանաչելի դարձնելուն ուղղված միջոցառումների, տեղեկատվական հարթակների, ինչպես նաև մարքեթինգային քաղաքականության իրականացման համար:

Գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը 2020թ. կկազմեն 0.3 մլրդ դրամ՝ 2019-ի 0.2 մլրդ դրամի փոխարեն, ավելացումը նախորդ տարվա համեմատ կլինի 0.1 մլրդ դրամ կամ 50%: Գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը ամբողջությամբ կհատկացվեն Երևան քաղաքի որոշ հատվածների ոռոգման ցանցի կառուցմանն ու վերանորոգմանը:

Տնտեսական ծառայությունների խմբի մեջ է մտնում տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) հոդվածը, որը ներկայացնում է մուտքեր տնտեսական ծառայություններին ուղղված ծախսերի մեջ: Այսպես, 2020թ. տնտեսական հարաբերություններից մուտքերը կկազմեն 2.4 մլրդ դրամ, 2019-ին՝ 2.2 մլրդ դրամ, իսկ ըստ 2018թ. փաստացի ցուցանիշի այն կազմել է 3.4 մլրդ դրամ:

Ըստ ծառայությունների խոշորացված խմբերի ծախսերի՝ սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերը 2020թ. կկազմեն 41.0 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 35.2%-ը: Սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերը 2020-ին 2019-ի համեմատ բոլոր կատեգորիաներով աճ են գրանցել:

Գծապատկեր 6. Սոցիալական ծառայությունների գծով ծախսեր, մլրդ դրամ¹



Սոցիալական ծառայությունների խմբի մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեն կրթությանն ուղղված ծախսերը՝ 34.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 29.3%:

¹ 2018թ. համար օգտագործված են փաստացի ցուցանիշները, իսկ 2019 և 2020 թվականների համար օգտագործվել են բյուջեով հաստատված ցուցանիշները:

Կրթությանն ուղղված ծախսերը 2019թ. կկազմեն 29.5 մլրդ դրամ, ծախսերի ավելացումը 2020-ին 2019-ի համեմատ կկազմի 4.6 մլրդ դրամ կամ 15.6%, իսկ կրթության ուղղված ծախսերի տեսակարար կշիռը 2019թ. ընդհանուր ծախսերի մեջ կկազմի 35%, այսինքն՝ այս ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը 2020թ. կնվազի 2019-ի համեմատ 5.7 տոկոսային կետով: Կրթության ոլորտին ուղղվող ծախսերի ավելացումը 2020-ին 2019-ի համեմատ հիմնականում կապված է նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերի 1.1 մլրդ դրամ ավելացման հետ², տարրական ընդհանուր կրթությանն ուղղված ծախսերի 1.1 մլրդ դրամ ավելացման հետ, կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններին ուղղված ծախսերի ավելացման հետ (1.2 մլրդ դրամով): Կրթության ոլորտին ուղղված ծախսերը հիմնականում կնպատակաուղղվեն՝ Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորմանը, Երևանի ենթակայության մանկապարտեզների համար մանկական կահույքի ձեռքբերմանը, կենցաղային էլեկտրական սարքավորումների և այլ անհրաժեշտ գույքերի ձեռքբերմանը: Կրթության ոլորտին ուղղված ծախսերի ավելացումը հիմնականում իրենից ներկայացնում է պատվիրակված լիազորություն (<< 2020 թվականի պետական բյուջեի ցուցանիշների հիման վրա): 2019-ին հանրակրթական ուսուցման, հատուկ կրթության, ներառական կրթության և երեկոյան ուսուցման համար միասին վերցված նախատեսվել է 16.3 մլրդ դրամի պատվիրակված լիազորություններ, իսկ 2020-ին միայն հանրակրթական ուսուցման համար նախատեսվել է ստանալ 17.6 մլրդ դրամ:

Սոցիալական ծառայությունների խմբի մեջ են մտնում նաև հանգստի, մշակույթի և կրոնի ճյուղին ուղղված ծախսերը, որոնք 2020թ. կկազմեն 4 մլրդ դրամ՝ 2019թ. 3.2 մլրդ դրամի փոխարեն (ավելացումը 2020-ին 2019-ի համեմատ կկազմի 0.8 մլրդ դրամ կամ 25%): 2020-ին հանգստի, մշակույթի և կրոնի ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կկազմի 3.4%, 2019-ին՝ 3.8%, այսինքն՝ 2020-ին այս ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ կնվազի 0.4 տոկոսային կետով: Այս ճյուղին ուղղված ծախսերը, ինչպես նախորդ տարի, այս տարի ևս հիմնականում կուղղվի մշակութային ծառայություններին (2020-ին՝ 3.3 մլրդ դրամ, 2019-ին՝ 2.7 մլրդ դրամ): Հանգստի, մշակույթի և կրոնի ճյուղին ուղղված ծախսերի մեջ գրադարանային ծառայություններին ծրագրով նախատեսվել է 0.6 մլրդ դրամ (Երևանի համայնքային

² Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 25.7 հազ. դրամ՝ 2019թվականի 22.5 հազ. դրամի դիմաց, ինչը պայմանավորված է մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձերի 20% բարձրացմամբ:

գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար): Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված նպատակային հատկացումների մասով նախատեսվել է 0.3 մլրդ դրամ: Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման ծրագրով նախատեսվել է 0.5 մլրդ դրամ (Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով), իսկ մշակութային միջոցառումների իրականացման ծրագրով նախատեսվել է 1 մլրդ դրամ:

Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը 2020թ. կկազմեն 2.4 մլրդ դրամ՝ 2019թ. 2.1 մլրդ դրամի փոխարեն (ավելացումը 2020-ին նախորդ տարվա համեմատ կկազմի 0.3 մլրդ դրամ կամ 14.3%): Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ 2020-ին կկազմի 2.1%, 2019-ին՝ 2.5%, այսինքն՝ 2020-ին այս ճյուղին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ 2019-ի համեմատ կնվազի 0.4 տոկոսային կետով: Սոցիալական պաշտպանության ծախսերը կուղղվեն սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցության, սոցիալապես անապահով անձանց աջակցության և հասարակական կազմակերպություններին աջակցության ծրագրերին, ինչի համար նախատեսվել է 0.6 մլրդ դրամ: Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման (պատվիրակված լիազորություններ) համար ծրագրով նախատեսվել է 0.4 մլրդ դրամ: Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման (պատվիրակված լիազորություններ) համար ծրագրով նախատեսվել է 0.7 մլրդ դրամ:

2020թ. առողջապահությանն ուղղված ծախսերը կկազմեն 0.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 0.4 մլրդ դրամի փոխարեն (ավելացումը 2020-ին 2019-ի համեմատ կկազմի 0.1 մլրդ դրամ կամ 25%): Առողջապահության համար նախատեսված ծախսերը 2020-ին կուղղվեն առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերմանը՝ 202 մլն դրամ (այստեղ հատկանշական է այն փաստը, որ առողջապահական սարքավորումների օգտագործման կարողությունները զարգացնելու համար, առողջապահական կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստման համար գումար չի հատկացվել): 2019-ին այս հոդվածին ուղղված ծախսերը կկազմեն 146 մլն դրամ: Առողջապահության ոլորտի ծախսերից կհատկացվեն նաև առողջապահական օբյեկտների հիմնանորոգմանը՝ 250 մլն դրամ (նախատեսված գումարը կուղղվի համայնքային ենթակայության թվով

2 պոլիկլինիկաների հիմնանորոգմանը), 2019-ին առողջապահական օբյեկտների հիմնանորոգման համար նախատեսվել է 150 մլն դրամ:

Երևանի բյուջեով նախատեսվել է պահուստային ֆոնդ 10.5 մլրդ դրամի չափով, որից 9.3 մլրդ դրամից ավելի կազմում է վարչական մասը, իսկ 1.1 մլրդ դրամից ավելի կազմում է ֆոնդային մասը: Ֆոնդային մասից 0.5 մլրդ դրամը ուղղվելու է մասնակցային բյուջեի համատեքստում Երևան քաղաքի բնակիչների կողմից առաջարկվող նոր ծրագրերի և գաղափարների իրագործելիության ուսումնասիրմանը և դրանց իրականացմանը: Վարչական մասի պահուստային ֆոնդից 9.2 մլրդ դրամը նախատեսվում է հատկացնել (հիմք ընդունելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշը) որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգմանն ու կառավարմանը: *Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով, քանի որ այն ծախսային մասում ներառելու դեպքում չէր ապահովվի «Բյուջեային համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահուստային ֆոնդի համար նախատեսված նվազագույն 5%-անոց շեմը:*

Ընդհանուր ծախսերի մասին խոսելիս հարկ է նշել 2019-ին գրանցված աննախադեպ թերծախսի մասին, որը կազմում է 7.8 մլրդ դրամ, ինչն աննախադեպ է համարվում, քանի որ մինչ այդ Երևանի բյուջեի թերծախսերի այդպիսի մակարդակ չի եղել: Իսկ թե որ հոդվածներում է ծախսերը թերակատարվել, կհասկանանք միայն 2019թ. բյուջեի կատարողականը տեսնելուց հետո:

2020թ. Երևան քաղաքի բյուջեում նախորդ տարվա համար նախատեսված ցուցանիշի համեմատ 11.8 անգամ աճել են հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացման համար նախատեսված ծախսերը. 2020-ին նախատեսվել է 355 մլն դրամ՝ 2019-ի համար նախատեսված 30 մլն դրամի փոխարեն: Չնայած հրատապ լուծում պահանջող ծախսերը ըստ ճշտված ցուցանիշի 2019թ. կկազմեն 325 մլն դրամ, ինչի արդյունքում նկատվում է ճշտված և նախատեսված ցուցանիշների անհասկանալի ու չհիմնավորված աճելի տարբերություն:

2020թ. Երևանի բյուջեով հատկանշական է նաև «Կանաչապատում և շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի ստեղծումը: Բյուջեով ՀՈԱԿ-ին կհատկացվի 3.4 մլրդ դրամ, որից 2.2 մլրդ դրամը կազմելու են աշխատավարձերը, այսինքն՝

աշխատողների աշխատավարձը մոտ 2.5 անգամ բարձրանալու է՝ համեմատած Երևանի վարչական շրջաններում կանաչապատում իրականացնող ՓԲԸ-ներում աշխատողների աշխատավարձի:

2020թ. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» նորաստեղծ ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի ծրագրով նախատեսվել է 4.6 մլրդ դրամ, իսկ մինչև այդ ՀՈԱԿ-ի ստեղծումը՝ 2019-ին աղբահանության և սանիտարական մաքրման ծրագրով նախատեսվել էր 5.3 մլրդ դրամ, որը պետք է տրամադրվեր մասնավոր ընկերությանը՝ աղբահանման և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման համար: Նորաստեղծ ՀՈԱԿ-ի համար 2020-ին նախատեսված 4.6 մլրդ դրամ ծախսերին հարկ է գումարել նաև աղբահանության և սանիտարական մաքրման համար անհրաժեշտ սարքավորումների և պարագաների (աղբատար մեքենաներ, կենցաղային թափոնների կոնտեյներներ, աղբամանների գրպանիկներ) ձեռքբերման համար նախատեսված 0.6 մլրդ դրամը: Առաջին հայացքից նորաստեղծ ՀՈԱԿ-ի և նախկին մասնավոր ընկերության համար նախատեսված պահպանման ծախսերի տարբերությունը մեծ է, սակայն պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք. մասնավոր ընկերությունը այն է՝ «Սանիթեք Հայաստանը», իրեն տրամադրված գումարի մի մասը՝ 20%-ի չափով, վճարում էր պետությանը ԱԱՀ-ի տեսքով:

Կառավարման մարմինների պահպանման ծախսերը ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող միակ բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով ծախսեր են նախատեսվել 9.5 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 8.2%-ը, ինչը 2019 թվականի ճշտված համապատասխան ցուցանիշից ավելի է 0.3 մլրդ դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 5.6 մլրդ դրամ³: Հատկանշական է, որ հաշվարկված և նախատեսված հաստիքներում աշխատող անձանց խրախուսման համար, աշխատավարձի ֆոնդի 34.1%-ի չափով նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, իսկ


³ Հաստատված հաստիքացուցակով նախատեսված 2132.5 հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 1917.5 հաստիք:

2019-ին պարզևատրումների համար նախատեսվել էր աշխատավարձի ֆոնդի 38.2%-ը: Համեմատության համար հարկ է նշել, որ 2018թ. պարզևատրումները հաշվարկվել էին աշխատավարձի ֆոնդի 14.5%-ի չափով:

ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով նախատեսվում է 9.1 մլրդ դրամի չափով դեֆիցիտ: 2019թ. բյուջեով նախատեսված դեֆիցիտը կազմում է 1.3 մլրդ դրամ⁴: 2018թ. բյուջեով նախատեսված դեֆիցիտը կազմել է 0.05 մլրդ դրամ: 2020թ. բյուջեի դեֆիցիտը 2019թ. բյուջեով հաստատված դեֆիցիտի նկատմամբ ավելանալու է ավելի քան 7 անգամ, իսկ 2018թ. բյուջեով հաստատված դեֆիցիտի նկատմամբ ավելանալու է 184 անգամ: Հատկանշական է, որ ըստ 2018թ. բյուջեի փաստացի ցուցանիշի՝ Երևանի բյուջեն եղել է հավելուրդով, որը կազմել է 5.8 մլրդ դրամ, ինչը կապված է ծախսերի թերակատարմամբ (հաստատված բյուջեով եկամուտները՝ 80.2 մլրդ դրամ, ծախսերը՝ 80.2, փաստացի կատարողականը՝ համապատասխանաբար 68.6 մլրդ դրամ և 62.8 մլրդ դրամ):

Գծապատկեր 7. 2018-2020թթ. Երևանի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ⁵



2020թ. Երևանի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կիրականացվի հիմնականում ներքին աղբյուրների հաշվին: Փոխառու միջոցների հաշվին կստացվի

⁴ Այս ցուցանիշի մեծությունը պայմանավորված է սույն աշխատանքում տրված եկամուտների և ծախսերի տարբերությամբ թվերի կլորացման հետևանքով առաջացող շեղումով:

⁵ 2019 և 2020 թվականների բյուջեները պակասուրդով են, իսկ արդեն 2018թ. փաստացի ցուցանիշով բյուջեն հավելուրդային է:

1.8 մլրդ դրամ, որը կազմում է դեֆիցիտի 19.6%-ը (Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում նախատեսված վարկի ստացում, նախորդ տարվա 1.1 մլրդ դրամի փոխարեն): Ֆինանսական ակտիվների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը կկազմի 7.3 մլրդ դրամ, որը կազմում է դեֆիցիտի 80.4%-ը (նախորդ տարվա 0.2 մլրդ դրամի փոխարեն), որից համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կկազմի մոտ 7.9 մլրդ դրամ (նախորդ տարվա 0.7 մլրդ դրամի փոխարեն), իսկ բաժնետոմսերից և կապիտալի այլ մասնակցություններից կձևավորվի -0.5 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն չափով): Հատկանշական է այն փաստը, որ նախորդ 5 տարիների ընթացքում փաստացի ամենամեծ դեֆիցիտի չափը չի գերազանցել 1.5 մլրդ դրամը (2017-ին՝ մոտավորապես 1.5 մլրդ դրամ):

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ առաջին հայացքից Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեն թվում է տպավորիչ իր եկամուտների 28.9 տոկոս աճով: Սակայն, հարկ է հաշվի առնել, որ քաղաքի բյուջեի սեփական եկամուտներն աճում են ընդամենը 12.5 տոկոսով՝ մոտ 3 մլրդ դրամով՝ կապված ավտոմեքենաների քանակի աճի հետ, իսկ եկամուտների մնացած մասի աճը պայմանավորված է կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար տրամադրվող պետական ֆինանսավորման աճով: Քաղաքի բյուջեի հարկային եկամուտների գերակշիռ մաս կազմող գույքահարկի գծով եկամուտների նախատեսված աճը պարունակում է որոշ ռիսկեր, քանի որ ՀՀ ներկրված ավտոմեքենաներից մեծ մասը արտահանվում է ԵԱՏՄ երկրներ՝ առանց ՀՀ-ում հաշվառումից դուրս գալու:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ծախսերը նույնպես զգալի աճ են ունենալու, որը սակայն, նույնպես մեծամասամբ պայմանավորված է կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմամբ: Բացի այդ, կտրուկ աճելու են աղբահանմանն ուղղված ծախսերը՝ մոտ 90.5%-ով: Ստացվում է, որ աղբահանությունն ու սանիտարական մաքրումը իրականացնող նորաստեղծ ՀՈԱԿ-ն աշխատելու է մոտ երկու անգամ պակաս արդյունավետությամբ:

2020 թվականի բյուջեի դեֆիցիտը կլինի աննախադեպ բարձր մակարդակում՝ կազմելով 9.1 մլրդ դրամ: Սակայն, պետք է հաշվի առնենք, որ այն մեծամասամբ ֆինանսավորվելու է տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: